

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
27.02.2024 թ. նիստի թիվ 6 արձանագրություն**

Օրակարգ

1. 2023-2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքը:
3. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 26-ը: Գ. Ռ. Բարսեղյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ նիստի առաջին հարցին՝ 2023-2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփմանը: Դեկանը մանրամասն ներկայացրեց արդյունքները և հավելեց, որ ընդհանուր առմամբ դրանք բավարար են:

Գ. Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքին: Նա դիմեց ամբիոնների վարիչներին: Վերջիններս արձագանքեցին, որ ամեն ինչ ընթանում է իր բնականոն հունով:

Դեկանը անդրադարձավ նիստի օրակարգի երրորդ հարցին՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատմանը: Ուսումնական պլանները ընդհանուր առմամբ նույնն էին բացառությամբ Թարգմանության տեսության ամբիոնի: Ամբիոնի վարիչ Ռ. Ղազարյանը խոսեց Երևանի պետական համալսարանի և Վերոնայի համալսարանի օտար լեզուների և գրականության բաժնի իրակացվելիք համատեղ դիպլոմով մագիստրոսի կրթական ծրագրի մասին, որում պետք է կատարվեն հետևյալ փոփոխությունները.

1. մասնագիտացման դասընթացներ (պարտադիր) կառուցամասի «ՀՀ սրբավայրերը և զբոսաշրջության երթուղիները» առարկան տեղափոխել կամընտրական կառուցամաս

«Միջնադարյան Հայաստանի վանքերն ու եկեղեցիները» առարկայի փոխարեն (3 կրեդիտ, 3-րդ կիսամյակ),

2. մասնագիտացման դասընթացներ (պարտադիր) կառուցամաս ներմուծել «Արվեստն ու ճարտարապետությունը Վերածննդի ժամանակաշրջանում» (Art and Architecture in the Renaissance Period) առարկան (3 կրեդիտ, 2-րդ կիսամյակ),

3. պարտադիր կառուցամասի «ՀՀ և Արցախի կրոնական հուշարձանները» առարկան փոխարինել «Սոցիալական մեդիա և զբոսաշրջային հաղորդակցություն» (Social Media and Tourism Communication) առարկայով (6 կրեդիտ, 2-րդ կիսամյակ),

4. պարտադիր կառուցամասի «Զբոսաշրջության մենեջմենթի հիմունքներ» առարկան փոխարինել «Կառավարում և գործարարություն զբոսաշրջության ոլորտում» (Management and Business in Tourism) առարկայով (3 կրեդիտ, 1-ին կիսամյակ):

Ընթացիկ հարցեր

Միաձայն քվեարկությամբ որոշեցին՝

- ԵԼՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. Ռ. Առաքելյանի «Introducing Psycholinguistics» բուհական դասագիրքը երաշխավորել տպագրության:
- Երաշխավորել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի՝ Վերոնայի համալսարանի օտար լեզուների և գրականության բաժնի հետ իրականացվելիք համատեղ դիպլոմով մագիստրոսի կրթական ծրագրի փոփոխությունները:
- Երաշխավորել «Միջմշակութային հաղորդակցություն (ֆրանսերեն)» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ **Սուսաննա Արտակի Հարությունյանին** որպես Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ **Գայանե Ռուդոլֆի Սարգսյանի** օգնական:
- Երաշխավորել «Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ **Գոհար Աշոտի Հարությունյանին** Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ բ. գ. դ., պրոֆեսոր **Շուշանիկ Հարությունի Պարոնյանի** օգնական:
- Երաշխավորել «Վարչագործարարական թարգմանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ **Զեփյուռ Հրայրի Ղազարյանին** առաջադրել որպես Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, բ. գ.

թ., դոցենտ **Ռուզան Ռաֆայելի Ղազարյանի** օգնական, «Վարչագործարարական թարգմանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ **Մարիամ Հովհաննեսի Մալքոյանին**՝ նույն ամբիոնի դոցենտ, բ. գ. թ. **Իշխան Յուրիկի Դադյանի** օգնական:

- Երաշխավորել «Կիրառական լեզվաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ **Սյուզաննա Խաժակի Սարգսյանին** որպես անգլիական բանասիրության պրոֆեսոր, բ. գ. դ., **Գայանե Հարությունի Մուրադյանի** օգնական և «Կիրառական լեզվաբանություն» մագիստրոսական կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ **Արինա Դավթի Գրիգորյանին** նույն ամբիոնի դոցենտ, բ. գ. թ., ԵԼՀ ֆակուլտետի դեկան **Գևորգ Ռուդիկի Բարսեղյանի** օգնական:
- Երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ **Ամալիկ Սևակի Բաղդասարյանին** որպես անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ **Անուշ Ռոստոմի Սեդրակյանի** օգնական:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության
ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ

բ. գ. թ., դոցենտ՝

Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ. գ. թ., դոցենտ՝

Մ. Գ. Դավալյան

27.02.2024 թ.